ԴՊՐՈՑ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

ԽՄԲԱԳԻՐ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Վ. Ա. ՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՍՏԱՄԵԱՆ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 9 1875—1876 ՄԱՐՏ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Մասն. Եր.

1. Ազգային դպրոցների այժմեան դրութիւնը . 325—335
2. Գլխաւոր սկզբունքներ մանկավարժութեան (կշար.) 334—340
3. Մանկանց ճանապարհորդութեան մանկավարժական նշանակութիւնը . . . . . 341—344
4. Դպրոցական առողջապահութիւն (կշար.) . 345—360

Բ. Մասն.

1. Տիեզերքի անսահմանութիւնը (վերջ) . . 325—332
2. Բնական ծագումն կենդանիների եւ մանաւանդ Թռչունների դէպի տեղափոխութիւնը (վերջ) . 333—342
3. Ծխախոտ կամ տաբաք . . . . . 345—356
4. Նիւրենբէրգեան ծու կամ ծոցի ժամացոյց (կշար.) 357—362

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԳԱԳԻԱՆԵԱՆ ՎԱՆԻՑ.

ՌՑԻԴ — 1876

ԳՕՐՈՑ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 9 1875—1876 ՄԱՐՏ

ՄԱՍՆ ՈՒՆԱՋԻՆ

1876 ամի

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԳԱԶԻԱՆԵԱՆ Վ.ՍԴԻՑ.

Дозволено Цензурою. Тифлисъ, 20 Мая 1876 г.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԽՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դպրոցների այժմեան դրութիւնը
2. Գլխաւոր սկզբունքներ մանկավարժութեան։
3. Մանկանց ճանապարհորդութեան մանկավարժական նշանակութիւնը։
4. Դպրոցական առողջապահութիւն։

ԱԶԳԱՑԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՑԺՄԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ։

ԴՊՐՈՑԻ № 4 տետրակի մէջ մենք տպեցինք պաշտօնական աղբիւրներից քաղած մանրամասն տեղեկութիւններ մեր ազգային երկաեռ ամենատեսակ ուսումնարանների մասին։ Այդ վիճակագրական տեղեկութիւններից երեւումէր ի միջի այլոց որ՝ 1874 թ. մենք ունեցել ենք 500-ից աւելի ուսուցիչներ, որոց մեծ մասը ստացել է իւր ուսմունքը եւ կրթութիւնը շատ անբաւական սահմաններով նոյն ազգային միջնակարգ եւ ծխական դպրոցներում, եւ կամ՝ որ առաւել ճիշտն է՝ բաւական նշանաւոր մասն չէ ստացած ոչ մինչ ուսում։ Այսպէս մեր ազգային ուսուցիչը ներկայացնում է մեզ մի անորոշ, անպատրաստ, անզօր կերպարանք։ Այդպիսի դրութիւնը կամ կերպարանքը անշուշտ աւելի ծանր պիտի ճնշէ մեզ, եթէ չիշենք որ՝ ուսուցչի եական կոչումն է՝ տալ մի որոշ եւ կանոնաւոր կրթութիւն եւ ուղղութիւն ազգի մանուկներին, եւ թէ՝ ազգային դպրոցը միայն այն ժամանակ կարող է ցուցանել իւր մեծամեծ օգուտները, երբ նորա ուղղութիւնը եւ ընթացքը կունենան որոշ եւ կանոնաւոր կերպարանք։ Թուի թէ ամբողջ Հայ ազգը, Հայ հասարակութիւնը, Հայ ընտանիքը, Հայ մարդը, ամենեքեանք համաձայնասար ուշադրութիւն եւ հոգացողութիւն պիտի ունենային այն մարդոց մասին, որոց բարեմտու-

թեան, խոհականութեան, մտաւոր զարգացման եւ գործունէութեան յանձնուած են լինում հազարաւոր մանուկներ — ապագայ անդամները ազգի եւ հասարակութեան: Բայց տարաբախտաբար ընդ հակառակն ենք տեսնում:

Մեր ազգային ուսումնարանները, այն դրութեամբ, որով մէջ տեսնում ենք նոցա այժմ, դեռ եւս նոր են, ուստի հաւմեմատաբար կարճ միջոցում չէր կարող մշակուիլ նաեւ մեր ուսուցչի կանոնաւոր եւ որոշ կերպարանքը: Եթէ օրինակի կամ բազդատութեան համար վերցնենք Շվէյցարիա, Սաքսոնիա, Դանիա, Բելգիա, Շվեցիա, երկիրները, ուր ուսումնարանները հաշվում են իւրեանց կեանքը արգէն հարիւրաւոր տարիներով, մենք կտեսնենք որ՝ այնտեղ ուսուցիչը ստացել է անկախ, լուսաւորուած, որոշ քնաւորութեան եւ հաստատ համոզմունքների մարդու կերպարանք, եւ այժմ այդ երկիրները ներկայացնում են ճշմարիտ—լուսաւորուած կեդրոններ, ուր ժողովուրդը լիուլի վայելում է թէ նիւթաւորապէս եւ թէ բարոյականապէս դարուս լուսաւորութեան բազմատեսակ բարիքները: Պարզ է ուրեմն որ՝ ուսումնարանի լիակատար յառաջադիմութիւնը, հետեւաբար ժողովրդի կանոնաւոր կրթութեան եւ լուսաւորութեան գործը, անմիջապէս կախում ունի ուսուցչից: Ապա ուրեմն՝ մինչեւ որ մենք չդործադրենք մեր բոլոր ջանքը արժանաւոր ազգային ուսուցիչներ պատրաստելու համար, մեր ուսումնարանները կմնան միշտ իւրեանց ներկայ անգոհացուցիչ դրութեան մէջ, ուստի զուրկ կմնանք այն բոլոր բազմակողմանի օգուտներից, զորս պիտի ստանայինք եւ կարող էինք ստանալ նոցանից:

Բայց Հայ հասարակութիւնը մտածումէ արդեօք այս ծանրակշիռ գործի վերայ եւ տեսնումէ արդեօք կարեւոր եւ արժանաւոր պատրաստութիւն ընդունակ եւ յաջողակ ուսուցիչներ պատրաստելու մասին ազգային ուսումնարանների համար։—Դեռ եւս բնաւ ոչ։

Մենք մեր ամնագրի մէջ արդէն մի քանի անգամ խօսել ենք սոյն խնդրոյ խորհրդաւոր եւ ծանրակշիռ նշանակութեան մասին, եւ միշտ ասել ենք եւ կրկնել ենք որ՝ մինչեւ մենք չենք ունենայ օրինաւոր վարժապետանոցներ, առ այժմս գոնեայ մի հատ, չպիտի ունենանք նաեւ օրինաւոր ուսուցիչներ։ Մի եւ նոյնը այժմ դարձեալ կրկնումենք եւ հրաւիրումենք մեր բարձր Հոգեւոր իշխանութեան, մանկավարժութեամբ պարապող մարդոց եւ հարուստ ազգասէրների ուշադրութիւնը սոյն՝ օրական հացի անհրաժեշտութիւն ունեցող՝ գործի վերայ։ Յուսալով որ՝ մեր բազձանքը եւ սրտագին հրաւէրքը արձագանգ կգտնէ ազգի մէջ՝ ԴՊՐՈՑԻ առաջին եւ երկրորդ տարու տետրակների մէջ յաճախ խօսել ենք վարժապետանոցների արտաքին եւ ներքին կազմակերպութեան վերայ լինչպէս զօ. նախնեաց տետրակների մէջ հաղորդել էինք ընդարձակ տեղեկութիւններ գերմանիայի վարժապետանոցների մասին, որպէսզի աւելի հիմնաւոր կերպով մշակուի մեր մէջ այս խնդիրը։

Բայց պիտոյ է այստեղ աւելացնել որ՝ բաւական չէ ունենալ ընդունակ եւ արժանաւոր ուսուցիչներ, այլ կարի հարկաւոր է օրինաւոր կերպով ապահովացնել նոցա նիւթական դրութիւնը։ Այժմ մեր ազգային ուսուցիչների վիճակը, բաց առնելով հինգ-վեց հատ խոշոր ուսումնարանները, անտանելի եւ թշուառ դրութեան մէջ է։ Գիւղական

ուսուցիչները ըստ մեծի մասին ստանում են տարեկան ռո-
ճիկ 60 ռ.—150 եւ աւելի ոչինչ, ոչ բնակարան (սակաւ
բացառութեամբ), ոչ փայտ, ոչ ծառայ եւլն։ Ո՛րչափ հա-
մեստ, խնայող եւ չափաւոր մարդ լինի ուսուցիչը, այնու
ամենայնիւ այդպիսի չնչին գումարը հազիւ կարող է լրու-
ցանել ամբողջ տարու ընթացքում նորա գլխաւորագոյն
պիտոյքները—բնակարանի վարձը, մնունդը, հագուստը,
եւլն.; իսկ եթէ ուսուցիչը տմուտնացած է եւ ունի զաւակ-
ներ, յայնժամ այդ գումարը բոլորովին անբաւական է,
եթէ յիշենք այն եւս որ՝ մարդս չէ կարող ծախքել իւր բո-
լոր վաստակը, այլ պարտաւոր է անպատճառ նորա դէթ
մի աննշան մասն յետ ձգել կեանքիս բազմաթիւ ձախորդ
դիպուածների համար, յայնժամ մենք կհամոզուինք որ՝
վերոյիշեալ գումարը արդարեւ միանգամայն անգոհացու-
ցիչ է։ Նոյնպէս անգոհացուցիչ է մեր քաղաքների ուսու-
ցիչների նիւթաւոր դրութիւնը, որովհետեւ նոքա թէպէտ
փոքր ինչ աւելի ռոճիկ են ստանում, բայց համեմատաբար
եւ աւելի ծախք ունին։ Եւ ահա այսպիսի դրութիւնը յա-
ռաջացնում է հետեւեալ երկու երեւոյթ։ Առաջին՝ ուսուց-
չութեան պաշտօնին հետամուտ են լինում եւ յանձն են
առնում այդ պաշտօնը ըստ մեծի մասին անգրագէտ տի-
րացուներ, թերուս աշակերտներ ազգային դպրոցների, թա-
փառական եւ վատաբարոյ երիտասարդներ, եւ առ հասա-
րակ ծոյլ, բթամիտ, անընդունակ մարդիկ, որք չեն կարող
կամ չեն կամենում ուրիշ ճանապարհներով ձեռք բերել
իւրեանց օրական ապրուստը։ Երկրորդ՝ եթէ երբեմն պա-
տահում է որ՝ մի երիտասարդ ուսումը աւարտած կամ ազ-
գային լաւագոյն ուսումնարանում եւ կամ մինչեւ անգամ

տէրութեան միջնակարգ ուսումնարանում, պարզ եւ լուսաւոր գաղափարներով, ազգասիրական ոգւով մանկավարժական եռանդով, յանձն է առնում ուսուցչի պաշտօնը գիւղական դպրոցում, առաւելապէս իւր հայրենի կամ նորանից մերձակայ գիւղում, հաստատ կամքով մաքառել զանազան նեղութեանց հետ, ոգեւորել գիւղացիները եւ գրաւել նոցա սէրը եւ խնամքը դէպի դպրոցը։ Այդպիսի երիտասարդը շուտով ուժաթափ է լինում, ընկճվում է, փըշըրվում է, ոչ միայն չքաւորութիւնից, այլ մանաւանդ շըրջապատող տգիտութիւնից եւ մի քանի փառասէր, պատուախնդիր, մեծամիտ եւ խրոխտաբարոյ մարդոց անբարեվիճակ կրքերի ազդեցութիւնից, որպիսի մարդիկ — այս ազգի ցեցերը եւ ուտիճները — տարաբախտաբար սակաւ չեն մինչեւ անգամ գիւղերում։ Սորա հետեւանքը լինում է այն որ՝ աղնուամիտ երիտասարդը կամ արդարացի արհամարհանքով եւ ատելութեամբ թուլընում է շտապով այդ գիւղը եւ գնում է մի ուրիշ տեղ՝ յուսալով այնտեղ գտնել իւր գործունէութեան ասպարէզը, եւ կամ՝ որ առաւել վատն է՝ կամաց կամաց կորցնում է իւր հոգու ազնիւ յատկութիւնները, եւ թուլանալով ու ըթամտանալով՝ մնում է նոյն ուսումնարանում մինչեւ իւր մահը, շատ անգամ այնուհետեւ լինքն եւս արգելք լինելով մի ուրիշ երիտասարդի ազնիւ եռանդին։ Բացի սորանից՝ ուսուցչական ոճիկի ոտկատութեան մի ծանրագոյն եւ վնասակար հետեւանքը լինում է այն եւս որ՝ ուսուցիչները շուտ շուտ փոխում են իւրեանց տեղերը եւ թափառում են գիւղից գիւղ, քաղաքից քաղաք՝ աւելի մեծ ոճիկով ուսուցչութեան պաշտօն գտնելու համար։ Սորանից հետեւում է այն որ՝ մի կողմից դպրոցները

յաճախ մնուամեն անուսուցիչ, եւ միւս կողմից՝ ուսուցիչները՝ գտնելով երբեմն պատահմամբ այլ տեսակ օգտակար պարապմունք՝ թողնուամեն ուսուցչական գործունէութիւնը, որով մեր դպրոցները կորցնուամեն երբեմն ընդունակ եւ գործունեայ ուսուցիչներ։

Եթէ վերոյիշեալ՝ հանգամանքների վերայ աւելացնենք այն եւս որ՝ ընդունակ եւ զարգացած ուսուցիչը ապրելով գիւղում եւ ուրեմն շրջապատած լինելով թանձր տգիտութիւնով, մեծ կարօտութիւն ունի մի կողմից անդադար պարապիլ ընթերցանութեամբ ոչ միայն մանկավարժական, այլ եւ արտաքին գիտութեանց եւ աշխարհային կենցաղավարութեան նշանաւոր հանգամանքների, դէպքերի եւ երեւոյթների մասին խօսող գրքերի եւ լրագիրների, միւս կողմից՝ այդպիսի գրուածների սակաւութիւնը, յայնժամ չըպիտի զարմանանք եթէ մեր ուսուցիչներից մեծագոյն մասը գիւղերում եւ երբեմն քաղաքներում ներկայացնուամեն մեզ բթացած, հնացած եւ անգոհացուցիչ մանկավարժներ։

Բայց բաւական չէ ունենալ ընդունակ ուսուցիչներ եւ փող, այլ հարկաւոր է որ՝ դոցա կառավարիչները լինին նոյնպէս ընդունակ եւ բարեմիտ մարդիկ։ Մեր ուսումնարանների կառավարութիւնը բաժանվուամէ երկու գլխաւոր մասըն—վարչական եւ տնտեսական։ Առաջին մասն ինչպէս յայտնի է պատկանուամէ մեր հոգեւոր իշխանութեան, բայց նոյնպէս յայտնի է որ՝ մեր վիճակաւոր Առաջնորդներից եւ Ծայրորդներից մեծագոյն մասը ամենեւին չեն հոգում իրեանց վիճակի ուսումնարանների վերայ, մինչ դեռ այս է նոցա ոչ միայն պաշտօնական, այլ եւ բարոյական գլխաւոր պարտաւորութիւններից մինը։ Մենք գիտենք մի քանի Ա-

ուսուցիչներ, որք տարիներով ոտք չեն դնում ոչ միայն իւրեանց քաղաքի, այլ եւ իւրեանց բակի մէջ գոնանուած ուսումնարանում, գիտենք նոյնպէս որ՝ բայի Թիֆլիզի վիճակից մեզ վիճակներում դեռ եւս կամ բոլորովին չկան թեմական տեսուչներ եւ կամ եղածները անընդունակ եւ անպատրաստ, կամ՝ որաւելի վատն է՝ անհոգ անձինք են, մինչդեռ մի հատ ժիր, գործունեայ եւ ազգասէր թեմական տեսուչը կարող է կենդանութիւն տալ ամբողջ թեմի դպրոցներին, որոյ ապացոյցն է Թիֆլիզի վիճակի թեմական տեսուչը։ Երկրորդ մասն պատկանում է հոգաբարձութեան։ Գլխաւոր սխալը, որը նշմարւում է համարեա ամենայն տեղ, այն է որ՝ մեր հոգաբարձութիւնները կարծում են թէ նորա պիտի կառավարեն դպրոցներին նաեւ ուսումնական մասն ուսուցիչ արձակել կամ հրաւիրել, ուսման շրջանը համառօտել կամ ընդարձակել, եւն։ Այսպիսի սխալ կարծիքի խոշորութիւնները նշմարելի են։ Եթէ մեր ուսուցիչները հաստատուում լինէին իւրեանց պաշտօնների մէջ ըստ թեմական տեսչի առաջարկութեան Առաջնորդի հրամանով, եւ նոյն կերպով արձակուում լինէին նորա, յայնժամ ամեն մի հոգաբարձու չէր կարող խելքից փչածին պէս հրաժարեցնել պաշտօնից այս կամ այն ուսուցիչը։ Եթէ մեր ծխական գպրոցները առանձին, միջնակարգները առանձին, ունենային իւրեանց մի մի ընդհանուր եւ միատեսակ, հշտութեամբ եւ խստութեամբ պահպանուած կանոնադրութիւններ, յայնժամ ամեն մի հոգաբարձու չէր կարող ծախքը համառօտելու պատճառաբանութեամբ տարիներով խափանել այս կամ այն, երբեմն դժուար առարկայի դասատուութիւնը։ Մի խօսքով՝ եթէ մեր հոգեւոր իշխանութիւնը կանոնաւոր

կերպով կառավարէր ազգային ուսումնարանների վարչական մասն, յայնժամ հոգաբարձութեանց կմնար հոգալ միայն տնտեսական մասի վերայ։ Բայց որովհետեւ մեր դպրոցների վարչական իշխանութիւնը դեռ եւս շատ սակաւ է մտածում նոցա ուսումնական մասի բարեկարգութեան վերայ, ուստի հոգաբարձութիւնները՝ գուցէ ստիպուած հանգամանքներից՝ սկսել են միջամուխ լինել նաեւ այդ մասի մէջ։ Ի հարկէ ոչ թէ չէր կարելի պահարակել նոցա այդպիսի միջամտութիւնը, այլ գուցէ հարկաւոր կլինէր գովել նոցա եւ շնորհակալ լինել, եթէ միայն նոքա բարեմտութեամբ կատարէին իւրեանց ուղիղ պարտաւորութեանց հետ նաեւ այդ պարտաւորութիւնը։ Բայց ոչ՛ք են մեր հոգաբարձուները, թէ՛ քաղաքներում եւ թէ՛ գիւղերում դոքա են ըստ մեծի մասին բախտախնդիր, փառասէր, պատիւ սիրող եւ գործից փախչող մարդիկ։ Մեզ պատահեցաւ տեսնել միայն քաղաքներից մէկում մի հոգաբարձու, հարուստ, աղնուական եւ քաղաքի մէջ նշանաւոր մարդ, որը պարծենալով պատմում էր թէ՝ չորս տարու ընթացքում իւր հոգաբարձութեան ներքոյ եղած ուսումնարանում նա եղել է միայն երեք անգամ—բարօն Նիկոլայու, Պ. Նէվէխովի եւ Առաջնորդի այցելութեանց ժամանակ։ Եւ ահա այդ հոգաբարձուն իւր ընկերի հետ միասին իւրեանց անհոգութեամբ վատնել էին նոյն չորս տարու ընթացքում մօտ ինը հազար ռուբ. արդիւնք նոյն ուսումնարանի։ Եւ առհասարակ մեր հոգաբարձուները իբրեւ խոշոր անձինք իւրեանց շրջաններում միշտ կարողանում են մի կողմից կազմել իւրեանց համար կուսակցութիւններ շողոքորթող եւ ստոր անձինքներից, մի՝ ս կողմից՝ անձնիշխանաբար վարուել ու-

սուվնարանի թէ ուսուվնական եւ թէ մանաւանդ տնտեսական գործերի հետ։ Եթէ յիշենք վերջին երկու տարու ընթացքում «Մեղուի» եւ «Մշակի» մէջ տպած բողոքները հոգաբարձուների հարստահարութեանց, անբարեմտութեանց, անգործունէութեանց, յափշտակութեանց, եւ այլ շատ տեսակ անկանոն գործողութեանց դէմ, յայնժամ պիտի ընդունենք որ՝ արդարեւ այժմ նաեւ մեր հոգաբարձութիւնները հրաւու են մնում իւրեանց բուն պարտաւորութիւնները կատարելուց եւ հանդիսանում են անգոհացուցիչ։ Եւ թէ յիրաւի բաւական չէ ունենալ լաւ ուսուցիչներ եւ փող, այլ հարկաւոր է որ դոքա լինին լաւ կառավարիչների ձեռքում, որա ապացոյցն է Ներսիսեան Ուսուվնարանը։ Սա ունի տարեկան մօտ 25 հազար ռուբ արդիւնք եւ ըստ մեծի մասին գոհացուցիչ վարժապետներ, բայց այնու ամենայնիւ ողորմելի ուսուվնարանը ահա քանի տարի է ընկղմուած է ալեկոծեալ դրութեան մէջ եւ օրեցօր հեռու է մնում յառաջադիմութիւնից։

Այսպէս ուրեմն մեր ազգային դպրոցի այժմեան դրութեան բոլոր կողմերը գտանվում են անգոհացուցիչ վիճակի մէջ — անգոհացուցիչ է նորա ուսուցիչը, անգոհացուցիչ է նորա նիւթաւոր դրութիւնը, անգոհացուցիչ է նորա ուսուվնական եւ բարոյական կառավարութիւնը, անգոհացուցիչ է նորա տնտեսական կառավարութիւնը — հետեւաբար անգոհացուցիչ պիտի լինի եւ նորա յառաջադիմութիւնը, նորանից ստացած պտուղները... Բայց մինչեւ երբ պիտի մնայ հայկական դպրոցը այսպիսի դրութեան մէջ եւ ո՞վ պիտի բարւոքէ այդ դրութիւնը — հարցնում ենք նոցանից, որոց պարտքն է պատասխանել այս հարցմունքներին։

ԳԼՈՒԽԱՒՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ։

Մանկավարժութեան էութիւնը

Մանկավարժութիւնը է արուեստ պատրաստել ամենայաջողակ միջոց եւ պայմաններ մանկան զարգացման համար։ Այդ միջոցը եւ նորա ազդեցութեան աստիճանը որոշվումն գիտութիւնով, տեսական մասնով վանկավարժութեան։ Իսկ այդ գիտութեան հիմունքը պէտք լինի հոգեբանական եւ կենսաբանական գիտուժն կամ ճանաչուժն մարդկային ընութեան առ հասարակ եւ մանկական ընութեան մասնաւորապէս։ Իսկ հոգեբանութիւնը ունի իւր համար միակ եւ հաստատ նեցուկ—ընական գիտութիւնք, այն է՝ անդամազննութիւն, որը ծանօթացնումէ մարդկային մարմնոյ կազմակերպութեան հետ, եւ կենսաբանութիւն՝ որը բացատրումէ կենդանի եւ առողջ մարդկային մարմնոյ կենսական գործակատարութիւնքը։ Ձիմանալով այդ գիտութիւնները՝ չէ կարելի հասկանալ մանկան հոգեկան կեանքի երեւոյթները, կեանքի՝ որը սերտ կապակցութիւն ունի նորա կազմուածքի (մարմնոյ) հետ։ Այդ աւելի հարկաւոր է մանկան առաջին տարիքներումն, երբ նորա բոլոր բարոյականութիւնը սկզբնական է։ Ցետոյ բարոյականութեան դաղափարները այն աստիճան բարդվու-

մեն եւ գժուարանում որ նախ կենսաբանութեան գիտութիւնն չէ տալի միջոց հետազօտել իւրաքանչիւր հոգեբանական երեւոյթը առանձին։

Նպատակ մանկավարժութեան։

Կրթել սերունդ առաքինի, առողջ եւ աշխոյժ հոգւով եւ մարմնով, սերունդ բարեմիտ, գործունեայ, աշխատասէր, հոգացող ոչ միայն իւր, այլ եւ ուրիշ մարդոց բարեկեցութեան վերայ—ահա նպատակ մանկավարժութեան։ Այս նպատակը արմատական է, մշտական եւ անփոփոխելի բոլոր ժամանակների համար։ Այս կամ այն դարում փոխվում են ամբողջի միայն այլ եւ այլ մասունքները, որք կախում ունին լուսաւորութեան փոփոխական պահանջմունքներից։

Միջոցք մանկավարժութեան։

Կրթութեան գլխաւորագոյն միջոցներից մեկը է—կրթողի անձնականութիւնը։ Առաքինութիւնը չէ ստացվում խօսքերով, այլ զարգանում է բարի օրինակով եւ խրախուսանքով վարուել մի եւ նոյն կերպով։ Առողջութիւնը եւ մարմնու եւ հոգու աշխուժութիւնը թէպէտ եւ չեն ստացվում ուղղակի կրթողից, բայց անուղղակի կերպով նաեւ կրթողը ունի շատ մեծ ազդեցութիւն նոցա զարգացման վերայ։ Հիւանդոտ եւ մելամաղձոտ կրթողը հազիւ երբեմն գոյեացնում է զուարթ եւ աշխուժաւոր աշակերտ։ Բայց որովհետեւ աշակերտի հետ ապրում է կրթողը ոչ միայնակ, այլ նա շրջապատուած է ծնողներով, ծառաներով, ծա-

նօթներով, որք շատ անգամ ոչնչացնուժեն կամ նուազացնուժեն կրթողի լաւ ազդեցութիւնը, ուստի նա պարտաւոր է աշխատել ամ.նայն ջանքով հեռացնել իւր աշակերտից բոլոր վնասակար ազդեցութիւնները։ Ուրեմն մանկավարժական միջոցները լինուժեն դրական եւ բացասական։

Որպիսի հասակ ենթարկելի է կրթութեան։

Մանուկը իւր ծննդեան օրից արդէն կրթվուժ է, այսինքն՝ ստանուժ որոշ սովորութիւններ, ցանկութիւններ, կազմակերպվուժ նորա յատուկ բնաւորութիւնը։ Լաւ է եթէ կրթողը գիտէ թէ ինչ փոփոխութիւններ են պատահում մանկան մէջ մեծանալու ժամանակ, յայնժամ նա կաշխատի որ՝ նորա բնաւորութիւնը զարգանայ եւ կազմակերպուի բնականաբար, կանոնաւոր կերպով, եւ ոչ թէ իւր անհոգացողութիւնից ստանայ վատ ուղղութիւն։ Իսկ առ հասարակ մանկան կեանքի մէջ կարելի է որոշել զարգացման զանազան աստիճանները, որք պահանջուժեն զանազան տեսակ վարմունք կրթողի կողմից։ Մինչեւ 8 տարեկան հասակը աւելի բնական ընթացք ունի մանկան մտաւոր, հոգեկան եւ ֆիզիքական ոյժերի զարգացումն։ Այդ ժամանակ հարկաւոր է զարգացնել նորա մէջ սէր եւ յարգանք առ մերձաւորը, աշխատասիրութիւն, կամահաստատութիւն, ինքնագոսպութիւն, առաքինութիւն, եւ պէտք է արթնութեամբ հսկել որ չզարգանան վատ յատկութիւններ։ 8 տարեկան հասակից յետոյ մանուկը արդէն կարող է, ըստ իւր մտաւոր զարգացման, գնալ դպրոց, եւ այնուհետեւ ուսումնատուութիւնը դառնուժ գլխաւոր օգնական կրթութեան։

Ո՞րպիսի գանազանութիւն կայ կրթութեան և ուսումնատուութեան մէջ։

Ուսումնատուութիւնը է կրթութեան օժանդակող միջոցներից մէկը։ Ստացած գիտութիւնների (տեղեկութիւնների) օգնութեամբ կատարելագործվում են մանկան մտաւոր ընդունակութիւնները եւ այդ գիտութիւնները տալիս են նորան միջոցներ ապագայ ինքնակախ կեանքի համար։ Բացի սորանից՝ ուսումնատուութիւնը զարգացնում է բնաւորութեան մէջ կամահաստատութիւն, համբերութիւն, ինքնակառավարութիւն։ Ուսուցիչը կարող է զարգացնել աշակերտի մէջ նոյնպիսի ազնիւ եւ արդարամիտ գաղափարներ կեանքի, որպիսի կարող է եւ կրթողը։ Բայց կրթողի ազդեցութիւնը եւ գործունէութիւնը աւելի ընդարձակ են. նա ազդում է մանկան կեանքի բոլոր կողմերի վերայ, մինչդեռ ուսուցիչը ազդում է ժամանակաւորապէս, աւելի խօսքով քան թէ գործով։ Ա՛յս պատճառով առ հասարակ կրթողի ազդեցութիւնը լինում է աւելի հաստատ, աւելի խոր, քան թէ ուսուցչի ազդեցութիւնը։ Բայց եթէ ի նկատի առնենք որ՝ ուսում ստանում են հասակաւոր մանուկները, որոց համար խօսքը ունի մեծ, յափշտակող նշանակութիւն, իսկ կրթվում են փոքր մանուկներ, որոց բնաւորութեան վերայ բացի կրթողից ազդում են բազմաթիւ արտաքին երեւոյթները, յայնժամ դժուարանում ես որոշել թէ կրթութեան մէջ ո՞րոյ գործունէութիւնը աւելի ազդում է՝ կրթողի՞ թէ ուսուցչի՞։

Ո՞րտեղ հարկաւոր է կրթել մանուկը։

Մենք ասացինք որ՝ մանուկը ընտանիքում ենթարկվում է

շատ երեւոյթներին, որք վնասուէն նորա զարգացման, եւ թէ մինչեւ անգամ լուսաւորուած կրթողը ոչ միշտ կարող է հեռացնել կամ ոչնչացնել այն չարիքը, որը ծաճկաբար կայ յարաբերութեանց մէջ ծառաների հետ, ոգիտութեան մէջ նոյն իսկ ծնողների, կամ հասարակական, ժանտանդ մայրաքաղաքական կեանքի մէջ: Ուրեմն լաւ չէը լինի, հարցնելուէ, պատրաստել մի ընդօրինակելի կրթողական հաստատութիւն բոլորովին հեռացրած ամենատեսակ արատքին վնասակար ազդեցութիւններից, եւ կրթել այնտեղ մանուկները ծննդեան օրից մինչեւ ինքնակախ չափահաս հասակը, եւ գոյացնել այդպէսով նոր սերունդ, որին բոլորովին վերձեղած չլինին հին սերունդի թերութիւնները: Մի այդպիսի գաղափարը շատ անգամ յափշտակել է հանճարեղ մարդոց միտքը: Բայց այդ ահագին գաղափարը անիրագործելի է արդէն այն պատճառով որ՝ այդպիսի հաստատութեանց մէջ պէտք լինին խիստ շատ մարդիկ, ուրեմն պէտք լինի մի եւ նոյն հին սերունդը իւր թերութիւններով, որոնցից կամենուէին հեռու պահել մանուկները: Այն թերութիւնները, որք հայածուած պիտի լինին ընտանիքում, աւելի եւս կարմատանան այդպիսի հաստատութեան մէջ եւ առաւել մեծ ազդն զօրութեամբ, որովհետեւ վնասակար թերութեանց ընդդիմադրելու համար չկան այդ տեղ ընտանիքի բարի եւ օգտակար յատկութիւնները, որք են՝ սէր, անձնազոհութիւն հասակաւորների յօգուտ մանուկների եւ փոխադարձաբար, աշխատասիրութիւն, համբերութիւն եւ զօրութիւն վիշտերի եւ նեղութեան ժամանակ: Մի խօսքով այդպիսի հաստատութեան մէջ կեանքը աւելի նման կլինի լաւ յատկութիւններով եւ աւելի հարուստ վնասերով:

Դիցուք թէ՝ կարելի է ենթադրել որ՝ ժամանակով մարդոց բարոյականութիւնը այնպէս կատարեալ որ՝ հեշտ կլինի գտնել հարկաւոր քանակութեամբ բոլորովին բարոյական կրթողներ։ Բայց հարցնելի է թէ՝ արդեօք մի այդպիսի հատատուութիւնը հարկաւոր կլինի այն ժամանակ, երբ առ հասարակ բոլոր մարդիկ կդառնան աւելի առաքինի այժմեան մարդիկներից։ Երբ մանուկը կարող է անցուցանել իւր մանկութիւնը իւր բարոյական եւ առաքինի ընտանիքի մէջ, լինել վկայ իւր ծնողների աշխատող կեանքին, վայելելով նոցա սէրը եւ գուրգը։ Որքան աւելի փոքր է մանուկը, այնքան աւելի կարօտ է նա սիրոյն։ Կարմրեմ արդեօք թագաւորել սէրը կրթող հաստատութեան մէջ։ Ի հարկէ կարողէ լրբեւ անձնուիրութիւն կրթողների իւրեանց գործին, լրբեւ բարեմիտ կատարումն իւրեանց գործի, բայց կարող է արդեօք լինել այնտեղ անհատական, անձնական սէր։ Թէպէտ եւ մանուկը կարող է սիրուած լինել նաեւ կրթող հաստատութեան մէջ, բայց չկան այնտեղ այնքան դէպքեր յուսյանելու համար նորան սէր եւ գուրգ, չկայ ժամանակ զբաղուելու նոցանով այնպէս ինչպէս զբաղվում են ծնողները։ Ի՞նչ հարկաւոր է մանկան այդպիսի քնքուշ ծնողական սէր, երբ փոխանակ գորա կրթող հաստատութեան մէջ կարող են կրթել նորան համաձայն առողջապահական եւ մանկավարժական բոլոր կանոններին, որը ոչ միշտ կարելի է առանձին իւրաքանչիւր տան մէջ։ Ի՞նչու համար—յատկապէս բանը այնտեղ է որ՝ սէրը առ մանուկը չէ ընդհանուր, այլ անհատական, անձնական, եւ է հիմնական, մանկավարժական սկզբունքներից մէկը, եւ այդ անկարելի է մի հաստատութեան մէջ, ուր մի

չափահասը գործ ունի շատ մատաղահասների հետ։ Սիրոյ ազդեցութեամբ լինքն մանուկը [illegible] աւելի սիրել եւ նորա մէջ ուրեմն զարգանում մարդկային լաւագոյն զգացմունքը։ Բացի սորանից՝ անձինք, որք խմբով մեծանում են հասարակաց հաստատութեան մէջ, միշտ պէտք լինին չճանաչող կեանքի։ Անհնարին է մտածել որ՝ մի այդպիսի հաստատութիւնը ունենայ այնպիսի բազմազան հարարաւոր հաղորդակցութիւն կեանքի հետ, որպիսի լինում ընտանիքի մէջ։ Տասը ընտանիքի զաւակները կարող են ստանալ միատեսակ կրթութիւն ըստ գաղափարի, ըստ նպատակի, բայց զանազան ըստ գործադրութեան, ըստ արտաքին դրութեան, եւ միաւորուելով միմեանց հետ՝ նոքա հաղորդուում են միմեանց այդ անհատական յատկութիւնները, ազդուում են միմեանց վերայ։ Բայց տասը ընտանիքի զաւակները կրթուելով մի տան մէջ՝ կենթարկվուում են ամենքը միեւնոյն տեսակ կեանքին ի վնաս նոցա անձնականութեան։ Այսպէս ուրեմն փոքր մանուկների կրթութեան համար աւելի լաւ է որ թոռ ընտանեաց ներքին կեանքը առաւել եւս բարւոքուի, իսկ մեծ մանուկների համար թոռ դպրոցն լինի լրումն ընտանեկան կեանքի։

(Կ. Պոլսոյ Հայկ.)

ՄԱՆԿԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԵԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ։

Ամեն մարդ տեսել է իւր կեանքում այնպիսի անձինք որք շատ ճանապարհորդել են ծովի եւ ցամաքի վերայ, եւ կարող էր նկատել այն մեծ տարբերութիւնը, որը կայ ճանապարհորդողների եւ իւրեանց հայրենիքից երբէք չհեռացած մարդոց մտաւոր զարգացման մէջ։ Այդ տարբերութիւնը ոչ միայն նորա մէջ է, որ՝ առաջինք շատ բան են տեսել եւ շատ բան գիտեն, եւ թէ նոցա հասկացողութիւնը, նոցա գաղափարը, աւելի ընդարձակ է եւ պարզ, այն պատճառով որ՝ նոքա ունեցել են յարաբերութիւններ շատ եւ զանազան մարդոց հետ, այլ նոյն իսկ բնաւորութիւնը այլապէս կազմվում է ճանապարհորդութեանց ազդեցութեամբ—մարդս դառնում է աւելի վստահ, աւելի գործունեայ, աւելի ինքնակախ աւելի մերձաւոր կերպով ճանաչանալով բնութեան երեւոյթների հետ եւ այլ շատ հանգամանքների պատճառով, երբ հարկաւոր է լինում առանց ուրիշի օգնականութեան փրկել իւր գլուխը ծանր փորձանքներից։ Եթէ ճանապարհորդութիւնը այդպիսի մեծ ազդեցութիւն ունի խելքի եւ բնաւորութեան զարգացման վերայ, ապա ուրեմն այդ միջոցը անշուշտ պիտի գործադրուած լինի նաեւ մանուկների կրթութեան գործի մէջ։ Եւ արդարեւ ցանկալի է որ՝ ճանապարհորդութիւնը անպատճառ մուծուած լինի կրթութեան ծրագրի մէջ։ Ումանք գուցէ կասեն թէ այդ անկարելի է, վասն զի ճանա-

պարհորդութիւնները շատ ծախք կպահանջեն, բայց այդ միայն լոկ խօսք է, որովհետեւ զաւակներն կրթութեան ժամանակ ամենքը վատնուժեն ոչ սակաւ դրամներ զանազան անօգուտ բաների վերայ, ինքեանք չնկատելով այդ։

Կրթութեան էութիւնը այն է որ՝ կրթողը իմանայ գործածել զանազան միջոցները անպատճառ իւր յարմար ժամանակին։ Ինչ որ օգտակար է մանկան մի հասակում, այն կարողէ լինել նորան շատ վնասակար մի ուրիշ հասակում, եւ ընդհակառակն։ Շրջապատեցէք մի տարեկան մանուկը խաղալիկներով, եւ դուք շատ կվնասէք նորան—նոքա հարկաւոր չեն նորան։ Մի տաք մի եւ նոյն խաղալիկները երկու երեք տարուց յետոյ—եւ դուք դարձեալ կվնասէք նորան—նոքա այժմ նորան հարկաւոր են։ Դատողութիւններ արէք ասեն քանի վերայ ութը տարեկան մանկան հետ, եւ դուք կշինէք նորան միայն մեծ մեծ խօսող առանց հասկանալու, բայց մի քանի տարուց յետոյ դուք պարտաւոր էք ոչ միայն պատասխանել դրականապէս նորա բոլոր հարցմունքներին, այլ եւ ինքներդ սիրտ շարժէք նորան դատողութիւններ անելու։ Մի եւ նոյն է եւ ճանապարհորդութեան վերաբերմամբ։ Մեծ մանուկների համար շատ օգտակար է ճանապարհորդութիւնը, փոքրերի համար—շատ վնասակար։

Տասը տարեկան հասակից սկսած մանուկը կարող է արդէն ճանապարհորդել, բայց ահա ինչ կերպով։ Մինչեւ այդ հասակը նա արդէն լաւ ծանօթ է բոլոր շրջակայ տեղերի հետ—իւր հայրենիքի (գիւղի կամ թաղի) հետ, ուստի նորան հարկաւոր է անցնել (գնալ) մի ուրիշ տեղ, եւ կարող է հեռանալ մի, երկու կամ աւելի օրով՝ գնալով գետինն-

թաշքով՝ պտուելով նորա սկիզբը կամ վերջը, կամ բարձրանալով սարի վերայ, նաեւ կարող է ծանօթանալ հեռաւոր գիւղերի եւ քաղաքների հետ, քաղդատելով նոցա քնակիչների բարքը եւ կեանքը իւր տեղաքնակութեան բարքի եւ կեանքի հետ։ Ի հարկէ այդպիսի ճանապարհորդութիւնները աւելի լաւ է եւ օգտակար կատարել ոտով, կամ գոնեա նոցա մի մասը, որովհետեւ այն ժամանակ կարելի է աւելի լաւ ծանօթանալ տեղական հողի, բոյսերի եւ այլ պարագաների հետ։ Ի հարկէ մանուկը պիտի ճանապարհորդէ այնպիսի մարդու հետ, որը եթէ չլինի գիտնական, գոնէ կարողանայ նկատել եւ բացատրել տեղական երեւոյթները, եւ չիմացած ժամանակ չամաչի նայել գրքի մէջ կամ բացատրութիւն հարցնել ուրիշից։ Բացի սո՛ր նից այդպիսի ճանապարհորդութիւնները ծանօթացնում են աշակերտները շրջենաւերի, երկաթուղիների, հեռագրների, կամուրջների շինութեան, եւ այլ շատ բաների հետ, եւ այս բոլորը տալիս է ոչ միայն հարուստ նիւթ խօսակցութեան, այլ եւ ուսումնասիրութեան, ընթերցանութեան տան մէջ։ Այդպիսի ճանապարհորդութիւններ կարելի է կատարել տարեկան մի քանի անգամ. դրա ոչ միայն լրացնում են աշակերտի գիտութիւնները, այլ եւ նորոգում են, թարմացնում նորան բարոյականապէս, եւ այդ է մի փրկարար եւ օգտակար փոփոխութիւն նորա միակերպ կեանքի մէջ, ուստի ամեն մի ճանապարհորդութիւնը դաստիարակիչ կլինի նորա կեանքի մէջ։

Ճանապարհորդելով այդպէս երկու երեք տարի իւր տեղաքնակութեան շրջակայքներում, մանուկը այնքան կը կազդուրուի եւ այնքան բան կիմանայ որ՝ կարող է այնու-

հետեւ աւելի հեռաւոր ճանապարհորդութիւններ կատարել իւր հայրենիքի զանազան մասներում: Հայ մանուկին, որը բնակվում է Թիֆլիզում, անշուշտ հարկաւոր է ծանօթանալ Երեւանի, հին Նախիջեւանի, Ալեքսանդրապօլու եւ Հայաստանի այլ մասների հետ: Ա.յդպիսի ճանապարհորդութիւնը կդառնայ կենդանի, գործնական ուսումնառութիւն՝ պատմական, աշխարհագրական եւ բնական մասների: Նկատողութիւնները բնակիչների եւ նոցա պարապմունքների մասին ցուցանում են նոցա արտադրութեանց եւ նոցա երկրի մէջ եղած կապը եւ սովորացնում են ժողովրդական տնտեսականութիւնը: Ա.յդպիսի ճանապարհորդութիւնը ծանօթացնում է ժողովրդի պիտոյքների հետ եւ պատրաստում ապագայ քաղաքական եւ հասարակական գործունէութեան համար: Լաւ ծանօթանալով իւր հայրենիքի հետ 16—18 տարեկան պատանին մեծ օգուտով կարող է գնալ օտար երկիրներ, եւ ուսումնասիրել այնտեղ օտար լեզուներ, օտար կեանք: Նա արդէն ունի քննողական հայեացք զանազան բաների վերայ եւ կարող է ընդունել, իւրացնել բոլոր լաւ բանները, կուրօրէն չենթարկուելով օտարի ազդեցութեան: Ծանօթանալով օտար երկրների կեանքի հետ եւ վերադառնալով իւր հայրենիքը, երիտասարդը է արդէն բոլորովին պատրաստուած եւ փորձուած մարդ, որը կարող կատարել իւր գործը սիրով եւ գիտակցաբար, եւ նա չի գործի այնպիսի սխալներ, որք անխուսափելի են նոյնպիսի երիտասարդի համար, որը դպրոցական նստարանից, առանց փորձառութեան, առանց սեփական հայացքի կեանքի վերայ, ուղղակի սկսում է հասարակական գործունէութիւնը:

(Տպ–նախ–ին–ն, տե՛ս ԴՊՐՈՑ, № 8, մասն. Բ.)

VII.

Աշակերտաց սեղաններ և նստարաններ։

Մեր ժամանակից գիտութիւնը բոլորովին վերժուժէ այն արմատացած սովորութիւնը որով իւրաքանչիւր նստարանը միշտ մնուժէ անպատճառ մի եւ նոյն դասարանում։ Ընդհակառակն հարկաւոր է նստարանները փոփոխել, երբ նոքա յարմար չեն աշակերտների հասակին։ Չէ պէտք կարծել որ՝ նստարանների ձեւափոխութիւնը համաձայն դպրոցական առողջապահութեան անդադար կպահանջէ փոփոխութիւններ եւ ուրեմն կպատճառէ մեծամեծ ծախքեր։ Բժիշկները չեն պահանջում որ՝ իւրաքանչիւր առանձին հասակի համար լինի եւ առանձին նստարան։ Բժշկապետ Երիմանի կարծիքով մանուկները, որոց բարձրութեան մէջ կայ տարբերութիւն միայն մինչեւ 4 բթաչափ, մեծ յարմարութեամբ կարող են նստել մի եւ նոյն նստարանի վերայ, իսկ որովհետեւ ծարների հետազօտութիւններից երեւումէ որ՝ սովորող մանկան աւրեկան բարձրութիւնը աւելանու-

մէ մօտ 2 բժշկապետ, ուրեմն իւրաքանչիւր տասորդը միջին թուով կարող է նստել մի եւ նոյն նստարանի վերայ երկու տարի։ Բժշկապետ Երիսմանը մանրամասնօրէն որոշեց թէ՝ դպրոցական նստարանները իւրեանց բոլոր մասներով օրպիսի մեծութիւն եւ չափեր պիտի ունենան որ՝ բոլորովին համապատասխան լինին աշակերտների հասակին։

Բոլոր բժիշկները համաձայն են որ՝ նստարանները պիտի ունենան յենարան, բայց թէ որպիսի ձեւ եւ կազմութիւն պիտի ունենան՝ յենարանը—այդ խնդիրը դեռ եւս չէ լուծուած վերջնականապէս։ Ոմանք պահանջումեն որ՝ յենարանը հասնէ մինչեւ թիկունքը, միւսները—մինչեւ մէջքը։ Երիսմանը նախադաս է համարում յենարանը մինչեւ մէջքը հետեւեալ պատճառներով։ Երբ յենարանը հասնում է մինչեւ թիկունքը, այն ժամանակ մէջքի այն տեղը, որը մերձաւորապէս հասնում է կուրծքի ողնաշարի մեծ կորնթիքին, կպչում է յենարանին։ Ողնաշարի կուրծքային մասնի ցածի կողմը կամ մասը եւ ամբողջ մէջքը (դօտին) մնում է ազատ՝ կոնքի եւ յենարանին կպած կէտի մէջ, ծռած դրութեամբ բարձրանալով դէպի քամակ եւ դէպի վեր եւ չոչնենալով յենարան, մինչդեռ մարմնոյ բոլոր ծանրութիւնը աւիւթվում է ողնաշարի մէջի մասնի վերայ, որով ողնաշարը յենարան ունենալով երկու կողմից եւ միայն մէջտեղում ծանրաբեռնուած լինելով բոլոր ծանրութեամբ՝ պիտի անպատճառ ծռուի դէպի քամակ, այնպէս որ բոլոր ներքնը թէքվում է դէպի առաջ եւ դորանով պատճառվում է շատ մեծ վնաս փորի գործարաններին եւ շնչառութեան։ Այդպիսի դրութեան ժամանակ մէջքը անպատճառ օգնում է դէպի ցած յենարանի վերայ։ Իսկ երբ յենարանը

հասնում է միայն մինչեւ մէջքը, յայնժամ գրուխիւնը լինում է բոլորովին այլ տեսակ, այսինքն՝ կենարանին կլոր մէջքը կամ ողնաշարի ցածի ոսկորները, որք մնում են անշարժ մինա երկու հանդստացող մասների (նստուկ) միջաբերմամբ եւ միաւորնալած են նոցա հետ, ուստի մէջքի միջանկեալ տեղը չէ կարող փոխել իւր ձեւը։ Այս պատճառով մարմնոյ գրաւիխնը, որը ստացուում է մէջքի կենարանի օգնութեամբ, կարող է մնալ երկար ժամանակ՝ չպատճառելով մարդուն ոչինչ ձանձրութիւն, որովհետեւ այդ միջոցին մկանունքը չեն կրում ճնշողութիւն։ Բայց եթէ կամք լինէր շինել երկու կենարան՝ մինը մինչեւ մէջքը եւ միւսը մինչեւ թիկունքը, պէտք որ այդ երկորդը լինի տախտակի ձեւով եւ միւս կենարանի քամակից դետեղուած՝ հասնելով թիկունքի միայն ցածի մասերին։ Բազմատեսակ նստարաններից մենք ուշադրութիւնը դարձնում ենք կախովկու եւ Սէնտ—Էլերի նստարանների վերայ։

Կախովկու նստարանը ունի հետեւեալ յատկութիւնները. 1) նա լինում է միայն մի աշակերտի համար, որով աշակերտին տալիս է փակատար աղատութիւն նստելու մասին, 2) նստարանը եւ սեղանը միաւորուած են անշարժ կերպով, որով աշակերտը չէ կարող մօտացնել կամ հեռացնել սեղանը, 3) սեղանը ունի արկղ, 4) սեղանը թեքած է այնքան որ՝ նորա բոլոր մասները հեռու լինին աչքից հաւասար կերպով, 5) արկղը ունի բացուող կափարիչ, որը հարկաւոր է արկղի մէջ մաքրութիւնը պահպանելու համար, 6) արկղի կափարիչը թոյլատրում է մօտացնել նորա ներքին կողքը դէպի աշակերտի կուրծքը, երբ որ այդ հարկաւոր է, եւ աշակերտը կարող է ոտի կանգնել սեղանի ա-

ուաջեւ առանց այս կողմ կամ այն կողմ քաշուելու, այլ միայն բարձրացնելով կաթսաները, 7) նստարանը ունի յենարան մինչեւ թիկունքը, 8) Սեղանի արկղը շարժական է եւ դիւրութեամբ կարելի է տալ սեղանին գրասեղանի (կանոթկայի) ձեւ, որով առաջեւ աշակերտը տեղաւորվում ազատօրէն յետ դարձնելով իւր նստարանը։

Ընդդէմ կախտվելու նստարանի բժշկապետ Էրիսմանը նկատում է հետեւեալը. 1) բժշկականութեան կողմից յոյժ անթոյլատրելի է որ աշակերտը գրէ ոտի վերայ կանգնած, մինչեւ անգամ հատակաւոր մարդու համար վնասակար է կանգնած գրելը, որովհետեւ այդ ժամանակ անկարելի է ուղիղ կանգնել. 2) յենարանը մինչեւ թիկունքը արգելում է մարմինը ազատօրէն դէպի քամակ ծռել։ Բայց պարզ է որ՝ այս նկատմունքները վերաբերվում են միայն մանաւոր թերութիւններին։

Սէնտ—Իլէրի սեղանը շինուած է համաձայն հետազոտութեանց յանձնաժողովի, որին յանձնուած էր որոշել դպրոցական նստարանի եւ սեղանների չափը եւ ձեւը Վլադիմիրեմբերգի թագաւորութեան ժողովրդական դպրոցների համար։ Սէնտ—Իլէրը ենթադրում է որ՝ նստարանները կարելի է տնտեսական խնայողութեան համար շինել երեք չափով՝ 8—10, 10—13 եւ 13—16 տարեկան մանուկների համար։ Իւրաքանչիւր հասակի համար նստարանը ունի այնպիսի մեծութիւն, որը համապատասխան է նոյն հասակի միջին սահմանին։ Ընդ նմին նստարան հնարողը տալիս է հետեւեալ գործնական խրատները նստարանի զանազան մասների չափի համար։ Նստարանի բարձրութիւնը պիտի հաւասար լինի ոտքերի կամ սրունքի բարձրութեան՝ ծուն-

կի ներքնակողմի ծալքից մինչեւ յատակը, իսկ նորա յայնութիւնը—հաւասար $^1/_5$ բարձրութեան աշակերտի։ Ուղղագիծ հեռաւորութիւնը նստարանի եւ սեղանի այն մասնի մէջ, որէյ վերայ կարելի է յենուլ արմունկներով, պիտի հաւասար լինի $^1/_6$ բարձրութեան աշակերտի։ Պարապ տեղը նստարանի եւ սեղանի տախտակի մէջ հաւասար 1—2 բթաչափին։ Սեղանի տախտակի յայնութիւնը կուրծքից մինչեւ առաջնակողմ շրթունքը սեղանի հաւասար 11—15 բթաչափին։ Սեղանի երեսի կամ վերջին տախտակի կորութիւնը հաւասար $^1/_6$ նորա յայնութեան։ Սեղանի տախտակի շրթունքի (որը դարձուցած է դէպի աշակերտը) եւ արկղի յատակը հաւասար $5^1/_2$—$8^1/_2$ բթաչափին։ Ընդոստնոցի յայնութիւնը հաւասար $^1/_9$ բարձրութեան աշակերտի։ Տարածութիւնը նստարանի քամակի կողմի եւ ընդոստնոցի մէջ հաւասար $^2/_5$ բարձրութեան աշակերտի։ Ներքին անկիւնը յատակի եւ ընդոստնոցի մէջ հաւասար 30°։ Սեղանի արտաքին կողմի եւ նորան կցած միւս սեղանի նստարանի մէջ գոյացած անկիւնը հաւասար 100°։ Սեղանի արտաքին երեսը ուրեմն է յենարան առաջեւ նստած աշակերտի համար, որովհետեւ ինքն նստարանը չունի յենարան։ Սեղանի եւ նստարանի երկարութիւնը մէկ աշակերտի համար հաւասար $^5/_{12}$ նորա բարձրութեան։ Այդպիսի սեղանը կարելի է շինել երկու, երեք եւ աւելի աշակերտների համար։

Աւարտելով խօսքը դպրոցական սեղանի եւ նստարանի մասին, հարկաւոր է յիշել երկրորդի մէկ գործնական նկատողութիւնը։ Այդ սեղանների եւ նստարանների վրիպոխոտութիւնները սկսած է ոչ թէ աւագ, այլ կրտսեր դասարաններից։ Աշակերտներին, որք քնտելացել են հին սեղան-

դեպի հետ եւ արդէն ստացել են հարճասիրութիւն, շատ դժուար է դրութեան ժամանակ նստել ուղիղ, ուսամբ կանոնաւոր ոչ ոեղանները օդատակոր չեն լինել նոցա համար։

VIII. Ուսման ժամանակը։

Մեղքները առ հասարակ մեծ հակամիտութիւն ունին դպրոցի ուղարկել իրեանց դաւակները աւելի մանաւանդ հասակում, քան թէ հարկաւոր է։ Այդ հակամիտութիւնը յառաջ է գալի զանազան պատճառներից. երբեմն մանուկը դպրոց ուղարկելը համարվում է յարմար միջոց աւելորդ հոգացողութիւնից ազատուելու համար, երբեմն ծնողները ունին սխալ ինքնասիրութիւն — առանձին ուրախութիւն գտնել մանկան կանուխ զարգացման մէջ։ Մանաւանդ հասմանուկը ուղարկել դպրոցը շատ վնասակար է նորա մարմնական եւ մտաւոր զարգացման համար։ Մանկան եօթը տարեկան հասակից առաջ ամենեւին չէ պէտք մտածել դպրոցի մասին։ Շատ անգամ հարկաւոր չէ բժիշկ լինել նկատելու համար որ՝ նուազ եւ հիւանդոտ մանուկը՝ թէ՛ սէտ եւ եօթը տարեկան՝ դեռ յարմար չէ դպրոցի համար։ Դպրոց մանելը միշտ գործում է մանկան մէջ մեծ փոփոխութիւն — նա կորցնում է սովորական ժրութիւնը, դառնում դանդաղ, ղղում է ախորժակի պակասութիւն։ Առողջակազմ մանուկների մէջ այս երեւոյթները շուտով անհետանում են եւ վերստին նորոգվում նոցա հասակին յատուկ ժրութիւնը եւ զուարթութիւնը։ Անյապաղ է լինում նուազակազմ մանուկների հետ։ Դպրոցական կեանքի անյարմարութիւնները եւ սահմանափակող պայմանները միշտ խա-

վանուժեն մանուկի կենսական զարգացումն։ Այդպիսի մանուկները գառնում են թոյլ, դանդաղ, արնուժ, դիւրագրգիռ, լացող, վերջապէս քրիամիա եւ ստանում են զանազան տեսակ հիւանդութիւններ։ Պէտք չէ խաբուիլ նորանով որ մանուկը վնքը հասակում երեւում է առողջ եւ հզօր իւր հասակից աւելի։ Ուզարկեցէք նորան ուսումնարան եւ կտեսնէք որ՝ նա 2—3 ամսուց յետոյ կկորցնէ իւր թարմութիւնը, իւր զուարթութիւնը, որովհետեւ նորա մտաւոր զարգացումն կկատարուի իւ՛նաս մարմնական զարգացման։ Մանկական բորբոքողական հիւանդութիւնները այդպիսի մանուկների համար համարեա միշտ կինում են մահաբեր։

Ի՞նչ օգուտ կայ եթէ մանուկը յարմար ժամանակից առաջ կմտնի դպրոց։ Ժամանակից առաջ նա չի սովորի, չի զարգանայ։ Ըստ մեծի մասին լինում է այնպէս որ մանուկը՝ առաջ զարմացնելով իւր մտաւոր զարգացմամբ, յետոյ հաւասարւում է իւր ընկերակիցների հետ, եւ վերջապէս յետ է մնում նոցանից, որովհետեւ նորա զօրութիւնը թուլացած է կարողութիւնից դուրս ճանրագոյն մտաւոր աշխատութեամբ։ Ուստի խորհուրդ ենք տալի ծնողներին—երբ մտքում կդնեն դպրոց ուղարկել իւրեանց մանուկը՝ անպատճառ խորհուրդ հարցնել հմուտ բժշկից արդեօք յարմար է նորա հասակը դպրոցական կեանքի համար։

Խիստ մեծ նշանակութիւն ունի մանկան առողջութեան համար ուսման ժամերի կանոնաւոր բաժանումը։ Այս կողմից դպրոցները միատեսակ չեն։ Ոմանց մէջ դասերը վերջանում են միեւնոյն ճաշը, ոմանց մէջ շարունակվում են ճաշից յետոյ երկրորդ տեսակ դասերի դէմ կան րնդհատիւ բողոքներ ուսուցիչների եւ ծնողների կողմից։ Շատ հասկա-

նալի է որ՝ ուսուցիչների համար աւելի յարմար է իւրեանց դասերը վերջացնել մինչեւ հաշը, քան թէ շարունակել նաեւ հաշից հետոյ։ Երբ չկան այդպիսի դասեր, ուսուցիչը ազատ է ամբողջ կէս օր։ Ծնողները նոյնպէս շատ պատճառներով հակառակ են երեկոյեան դասերին։ Իսկ մեր կարծիքով՝ եթէ հարկաւոր է անպակաս պահպանել դասերի որոշեալ թիւը, ապա ուրեմն մեծ եւ յարգելի հիմնաւորութիւն կայ դասերը բաժանելու առաւօտեան եւ կէսօրեան դասակարգի։

Մանկական կազմուածքը չէ կարողանում դիմանալ երկարատեւ հանգիստ նստողութեան մի եւ նոյն տեղում եւ ուշադրութեան երկարատեւ ամիոսութեան։ Երբ այդպիսի դրութիւնը ստիպողական է, երբ այդ դրութիւնը շրջապատած է դպրոցական շատ տեսակ անյարմար պայմաններով, դա մանկան համար լինում է առաւել եւս անտանելի։ Եթէ սովորական առաւօտեան չորս դասը չեն ընդմիջվում ազատ շրջողութեամբ մաքուր եւ արուաքին օդի մէջ, մանուկները արդէն երրորդ դասի ժամանակ լինում են թուլացած, անհասկացող եւ անհանգիստ։ Ուստի հիմնուելով կենսաբանական եւ առողջապահական սկզբունքների վերայ հարկաւոր է որ՝ իւրաքանչիւր մի ժամաւոր դասից յետոյ լինի հանգիստ գոնեայ մի քառորդ ժամ, եւ այդ միջոցին մանուկներին չպիտի արգելուին բարձրաձայն երգերը, եւլն։ Այն դպրոցներում, ուր պարապ կամ հանգստեան միջոցներում մանուկները վայելում են լիակատար ազատութիւն, երկարատեւ նստողութեան վնասակար հետեւանքները աւելի սակաւ զգալի են լինում, քան թէ այն դպրոցներում, ուր աշակերտները միշտ զուրկ են լինում

մանկական աղատութիւնից։ Առ հասարակ շարժողութիւնը, վկանունքների վարժողութիւնը, բարձրաձայն գոչումները, մանկական կազմուածքի ամենակարեւոր պիտոյքներ են։ Շարժողութիւնը, վազվզելը, բարձր ձայներ արձակելը ամենահարկաւոր պայմաններ են մանկան առողջութեան համար։ Որքան մանուկը հանգստութիւն ժամանակ աւելի շատ կխաղայ, շատ կը վազվզէ, շատ կարձակէ բարձր ձայներ, այնքան աւելի զուարթութիւն եւ աշխոյժ կզգայ նա՝ վերստին ակսելով իւր պարապմունքը։ Երկարատեւ նստողութիւնը մի տեղում աւելի շատ ձանձրութիւն է պատճառում մանկան, քան թէ ծանր աշխատանքը։ Երեսի դեղնութիւնը եւ արեան սակաւութիւնը աշակերտի նստոդական կեանքի սովորական հետեւանքներն են։ Աւագ դասարանների աշակերտների համար երկարատեւ նստողութիւնը հետեւացնում է նաեւ այլ ծանր վտանգ— պատճառելով արեան հզօր հոսանքներ մարմնի ցածի մասներում՝ ժամանակից առաջ զարգացնում է սրական զգացմունքները։ Այս վնասակարութիւնը աւելի մեծ է աղջկերանց ուսումնարաններում, ուր պատահում են արդէն հասունացած օրիորդներ եւ ունին ամսական մաքրոդութիւն (տեղատեսութիւն) եւ այդ պատճառով նոցա կանացի գործիքները աննեղում են արեան առաւութիւն։ Երկարատեւ նստողութիւնը նպաստում է դէրոցական բոլոր տեսակ հիւանդութեանց զարգացման, որոյ վախճանը լինում է շատ անգամ բարակացաւը։ Այս բոլորը ասում ենք ոչ թէ վախեցնելու համար, եւ այս բոլորը ոչ թէ հնարել է վախեցած երեւակայութիւնը, այլ վերցրած են անմիջապէս փորձից։ Մի ծխական գպրոցում, որը գնահել եր կարմիշեվ քժ իշկը, եւ որը չուներ բակ կամ որահ, ուր աշակերտները կարողանային խաղալ ա-

գատ միջոցներում, 24 աղջկանից, որք ուսումնարան մտնելու ժամանակ բոլորովին առողջ են եղել, 7 աղջիկ հիւանդ էին խուարտով (խոյլ, զօլօտուխա)։ Մի անգղիական ուսումնարանում, ուր կար 600 աշակերտ, խուարտը տարածուեցաւ սարսափելի կերպով եւ գորանից պատճառած մահերի թիւը սկսեց յոյժ մեծանալ։ ուստի բժիշկ Արնօտը հետազօտեց այդ տխուր հետեւանքների պատճառները եւ տեսաւ որ միակ գլխաւոր պատճառն էր աշակերտների երկարատեւ նստողութիւնը լաւ օդամաքրութիւն չունեցող սենեակների մէջ։ Երբ այդ պատճառը հեռացրին, աշակերտների առողջութեան բարելաւութիւնը վերանորոգուեցաւ կանոնաւոր կերպով։ Բարակացաւով հիւանդների վերայ կատարած նորագոյն հետազօտութիւնները ցուցանումեն որ՝ դիպուածների մեծագոյն մասնում բարակացաւը, թէ եւ յառաջ գալով պատահական պատճառներից, զօ. մրելուց, ունի հեռաւոր, բայց հիմնաւոր, պատճառ նստողական կեանքի եւ նորա հետ կապուած շնչառութեան գործիքների անկանոն գործունէութեան մէջ։

Օգուտ եւ ի պաշտպանութիւն այն գաղափարի թէ՝ արդարեւ հարկաւոր է ուսումնարանի պարապմունքները բաժանել հանգստութեան միջոցներով — կարելի է յառաջ բերել նաեւ կենսաբանական հիմունքը։ Մարդու հոգեբանական զօրութիւնները ունին իւրեանց գործիքներ։ Այսպէս օ. տեսողութեան գործիքը աչքն է, լսողութեանը՝ ականջն է, եւլն։ Մարդու մտածողական գործունէութեան գործիքն է ուղեղը։ Ինչպէս լսողութեան կամ տեսողութեան գործունէութեան եւ վարժողութեան ժամանակ չէ կարելի ի նկատի չունենալ նաեւ այդ զգացմունքների գործիքների կենսաբանական կեանքը, նոյնպէս եւ մտածողու-

թեան ընդունակութեան վարժողութեան ժամանակ չէ կարելի առանց ուշադրութեան թողնել ուղեղի այն կենսաբանական երեւոյթները, որք լինում են մտաւոր գործունէութեան ժամանակ։ Հոգեկան զօրութիւնների գործիքների կենսաբանական գործունէութեանց էութիւնը կայանում է շարժողութեան կամ նիւթի փոփոխութեան մէջ։ Նիւթի փոփոխութիւնը է կորուստ կամ ծախսումն որոշեալ մասների եւ ներստացումն միւսների։ Երբ ուղեղը բաւական երկար ժամանակ գտանվում է գործունէութեան մէջ, պակասում է նորա մէջ բովանդակած թթուածինը։ Ուղեղի այդպիսի դրութիւնը յայտնվում է քնուկութիւնով։ Քնուկ դրութիւնը կարելի է փոխել արթուն դրութեան միայն մի պայմանով՝ հանգստութիւն տալ ուղեղին կամ սակաւացնել նորա կորուստները։ Ահա սորա վերայ է հիմնվում քնելու զուարթացնող նշանակութիւնը։ Քնած ժամանակ ուղեղը գտանվում է անգործունէութեան մէջ եւ արիւնից ստանում է թթուածնի նոր պաշարներ։ Երբ աշակերտը սկսում է ցուցանել թմրութիւն եւ չհասկացողութիւն, այդ ապացոյց է որ՝ նորա ուղեղը ունի թթուածնի պակասութիւն։ Միակ միջոցը աշակերտին իւր սովորական արթնութիւնը վերադարձնելու համար է—մտցնել նորա ուղեղի մէջ թթուածնի նոր քանակութիւն, ուրեմն՝ դադարացնել նորա մտաւոր գործունէութիւնը կամ պարապմունքը եւ այդպէսով հանգստութիւն տալ նորա ուղեղին, հանել նորան շնչարգել եւ թթուածինով աղքատ դասարանից մաքուր օդի վերայ, եւ տալ նորան միջոց հղօրագոյն շարժողութիւններով ներս շնչել թթուածինով հարուստ մաքուր օդը առատութեամբ։ Եւ որովհետեւ մանկական կազմուածքը չէ դիմանում երկարատեւ մտաւոր աշխատութեան, ուստի նո-

բա պարապմունքները պիտի ընդմիջուեն աւելի յաճախ։ Դասի միջակ տեւողութիւնը կարելի է ընդունել կէս ժամից մինչեւ մի ժամ։ Ինկատի ունենալով վերոյբացատրեալ խորհրդածութիւնները՝ մենք համարումենք օգտակար եւ բնութեան օրէնքներին համաձայն—թողնել մի կամ երկու դասը ճաշից յետոյ։ Երկու ժամը, որը աշակերտը կանցնէ դասարանից դուրս շարժողութեանց մէջ եւ կկարողանայ կշռադատել իւր քաղցածութիւնը, այնչափ կզուարթացնէ եւ կթարմացնէ նորան որ՝ նա կարող կլինի լիակատար արթնութեամբ սկսել գործը։

Մենք մի քանի խօսք ասել ուսումնական պարապմունքների օրական բաժանմունքի մասին։ Այս կողմից չէ հարկաւոր առանց ուշադրութեան թողնել այն հանգամանքը որ՝ աշակերտը գնում է ուսումնարան լի թարմ ոյժերով եւ որքան աւելի երկար մնում է այնտեղ, այնքան աւելի ձանձրանում է եւ թուլանում։ Ուստի այն առարկաները, որք պահանջումեն աւելի մեծ մտաւոր գործունէութիւն, ինչպէս զօ. կրօնը, բացատրողական ընթերցանութիւնը, թուաբանութիւնը, պիտի աւելնայն օր նշանակուած լինին թեթեւ դասերից առաջ։ Կէսօրեայ դասերի համար պիտի նշանակուած լինին այնպիսի առարկաներ, որք պահանջումեն աւելի նուազ մտաւոր գործունէութիւն, զօ. հասարակ կամ մեքենայական ընթերցանութիւն, գծագրութիւն, նկարչութիւն, վայելչագրութիւն։

Ձաշից յետոյ վնասակար է աշակերտը զբաղեցնել մտաւոր ծանր աշխատութեամբ, որովհետեւ այդ ժամանակ նորա կազմուածքը ունի այլ աշխատութիւն—մարսողութիւն։

IX. Դաստիարակութիւն։

Առողջ խելքը առողջ մարմնում է—նկատած էր դեռ հին ժամանակներում։ Այս հնադարեան առածի մէջ կայ խոր իմաստ, որը պիտի լինի նշանաբան կրթութեան համար։ Այդ իմաստը ցուցանում է որ կրթութիւնը պիտի կատարուի զուգընթացաբար ֆիզիքական զարգացման հետ, ուրեմն մանկան նոյն իսկ մտաւոր զարգացման օգտի համար չէ պիտոյ առանց ուշադրութեան թողնել նորա մարմնական զարգացումն։ Փորձը համոզում է մեզ որ երբ մտաւոր կրթութիւնը չէ յարմարեցուցած մանկան մարմնական զարգացման պայմանների հետ այդ տեսակ կրթութիւնը յառաջ է բերում տխուր հետեւանքներ։ Ոչ ոք չգիտէ թէ սովորաբար ինչ վախճան են ունենում հանճարեղ կոչուած մանուկները, որք ղարմանքում են իւրեանց կանուխ զարգացմամբ, իսկ յետոյ անհամեմատ տուող են լինում յարուցած յոյսերից։ Ոչ չի նկատի այդպիսի մանուկների մէջ, որք զարգանում են ոչ համաձայն իւրեանց հասակին, նմանութիւն արուեստական բոյսերի հետ, որք փարթամ աճում են եւ տալիս են գեղեցիկ ծաղիկներ, բայց շատ նուազ եւ չնչին պտուղներ։

Այսպէս ուրեմն առողջամիտ եւ խելացի կրթութիւնը պիտի սկսուի մանկան ոյժերի, ֆիզիքական հետազօտութիւնից նորա բնութեան ուսումնասիրութիւնից։ Իսկապէս լինում ընդ հակառակն, դպրոցը համարում այդ գործը աւելորդ աշխատութիւն, պարզմտութեամբ ենթադրելով սովորողների բոլոր ոյժերը հաւասարապէս։ Այս սխալմունքով կրթութիւնը խիստ շատ անգամ առաջին քայլերից սկսուած կանգնում է ծուռը ճանապարհի վերայ։

Աշակերտի անձնական ոյժերի հետ անծանօթ լինելը,

բոլոր աշակերտները մի ընդհանուր խմբի մէջ խառնելը—է արդարեւ գլխաւորագոյն պակասութիւնը մեր դպրոցների։

Դպրոցը համարուած իւրեան իբրեւ մի անհատ ամբողջութիւն, որոյ մէջ կորչուած մասների նշանակութիւնը։ Դպրոցը կատարուած իւր ճանապարհը, իբրեւ մի նաւ եւ ամենեւին չէ անհանգստանում՝ եթէ ընթացքի ժամանակ կորցնուած իւր այս կամ այն մասները։ Հարկաւոր է արդեօք ընդարձակօրէն բացատրել որ՝ դպրոցի այդպիսի ուղղութիւնը սխալ է։ Դպրոցում, որը համարուած իբրեւ ամբողջութիւն, չկան մասներ, որք ունենային երկրորդական եւ երրորդական նշանակութիւն, ինչպէս նաւում, այլ նորա իւրաքանչիւր մասն ունի առաջին աստիճանի կարեւորութիւն։ Այն, ինչ որ դպրոցը նետուած իբրեւ աւելորդ ծանրութիւն, կեանքում շատ անգամ լինուած դանձ։ Այսպէս ուրեմն, մենք կրկնուենք որ՝ դպրոցի առաջին պարտաւորութիւնը աշակերտի վերաբերութեամբ է ուսումնասիրել նորա բնութիւնը։ Այս պատճառով դպրոցում աշակերտ ընդունելու ժամանակ, հարկաւոր է քննել նորան ոչ միայն մտաւոր զարգացման կողմից, այլ եւ նորա ֆիզիքական ոյժերի զարգացման կողմից։

Մանկան ֆիզիքական ոյժերը որոշուած են նորա հասակով, բայց միայն մասամբ իւրք։ Մինչեւ եօթը տարեկան հասակը հարկաւոր է անպատճառ մանուկը համարել տհաս (խակ) դպրոցի համար։ Որչափ եւ երեւայ նա արտաքուստ առոյգ եւ պնդակազմ, այնու ամենայնիւ կարելի է ասել որ՝ նորա ուղեղը դեռ այնքան չէ զարգացած որ՝ կանոնաւորեալ ուսումնասիրութեան տպաւորութիւնը եւ ազդեցութիւնը ծանր լինի նորա ոյժերի համար։ Բայց միւս կողմից եօթը տարեկան հասակը չէ ուղիղ ցուցմունք աշա-

կերտի հաւունութեան դպրոցի համար։ Այդ հաւասնութիւնը սկսւում է ոմանց մէջ կանուխ, ոմանց մէջ ուշ։ Մեր դարում, երբ այնպէս յաճախ են մանկական տկարութիւնները, ուշ հասունութիւնը դառնում է կանոն։ Ի հարկէ մանկան ֆիզիքական ոյժերի հետազօտութիւնը չպիտի ունենայ միայն մի հատ հետեւանք – ընդունել կամ չընդունել նորան դպրոցում։ Դպրոցում ընդունած աշակերտները այնու ամենայնիւ կներկայացնեն բաւական մեծ բազմազանութիւն ֆիզիքական հասունութեան վերաբերմամբ։ Ուսումնատուութիւնը երբէք չպիտի մոռանայ այդ բազմազան տարբերութիւնը, այլ պիտի գտնէ գործ մէջ մի ուղեցոյց աշակերտների հանհատասար պարապմունքների համար։

Դասատուութեան ձեւը, պարապմանց կարգը եւ աշակերտների մտաւոր վարժողութեան ցընաւորութիւնը – այս բոլորը պիտի խստիւ յարմարեցուցած լինի մանկական հասակի ֆիզիքական ոյժերին եւ յատկութիւններին։ Սկզբում դասատուութիւնը պիտի ունենայ առարկաների նկատողական ձեւ եւ զգուշութեամբ աստիճանաբար պիտի անցնի դէպի տեսական վարժողութիւնները։ Ուսումնատուութիւնը է մարզութիւն մտաւոր ընդունակութեանց։ Բայց իւրաքանչիւր մարմնամարզութիւնը տալիս է առաջ ամենաթեթեւ վարժութիւնները, եւ ապա անցնում է դէպի աւելի դժուարագոյնները այնչափով՝ որչափով որ զարգանում են մանկան ոյժերը եւ նորա արագաշարժութիւնը։ Կարողութիւնից բարձր մարմնամարզութիւնը թուլացնում է, եւ ոչ թէ զարգացնում կամ կազդուրում մարմինը։ Նոյնը կարելի է ասել մտաւոր մարզութեան մասին։ Ծանր մտաւոր աշխատութիւնը պատճառում է ուղեղի հիւանդոտ գրգռութիւն, եւ այդպէս թուլացնում է մտաւոր ոյժերի գործա-

րանը։ Աշակերտին տուած պարապմունքը պիտի համապատասխանէ նորա ոյժերին ոչ միայն իւր յատկութեամբ, այլ եւ իւր քանակութեամբ։ Ուղեղը չէ կարող զարգանալ եւ ցուցանել կանոնաւոր գործունէութիւն, եթէ չունի հանգստութիւն, որը համապատասխան լինէր նորա աշխատանաց։ Հանգստութեան միջոցները շատ հարկաւոր են ուղեղին, որպէս զի կարողանայ ազատուիլ իւր արդէն ապականուած մանրիկներից, որք հաւաքւում են նորա գործունէութեան ժամանակ, եւ ստանալ ամբողջ կազմուածքից նոր անուն—թթուածին։ Մանուկների համար այդպիսի հանգստութիւնը այնու մանաւանդ հարկաւոր է որ նոցա ուղեղը այդ հասակում մեծանում է, ուստի նորա մէջ մեծ արագութեամբ կատարւում է նիւթերի (մանրիկների) փոխակերպութիւնը։ Այս պատճառով աշակերտների մտաւոր վարժողութիւնները հարկաւոր է խըստիւ յարմարեցուցանել ուղեղի կենսական ոյժերին։ Այս հիման վերայ չէ կարելի թոյլ տալ որ դպրոցներում աշակերտները շատ ժամեր շարունակ եւ անընդհատ պարապէին մտաւոր աշխատութեամբ։ Մտաւոր վարժողութիւները պիտի կատարուին հերթով մեքենայական պարապմունց հետ, եթէ դպրոցական պարապմունքների բաժանումը չէ հինանաց այս կանոնի վերայ, յայնժամ մեծ վնաս կրում են ոչ միայն աշակերտները, այլ նաեւ վարժապետները։ Աշակերտները շուտով ձանձրանում են եւ սկսում են անուշադիր լինել։ Վարժապետը գրգռւում է աշակերտների անուշադրութեամբ, սկսում է գործադրել խիստ միջոցներ, ի հարկէ առանց յաջողութեան, եւ կորցնում է վարժապետին յատուկ կառավարութիւնը։ Բայց աշակերտի անուշադրութիւնը է բնական հետեւանք ուղեղի ձանձրութեան։ (Ներքինաց.)